



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

14.10.2016թ.

„Գնումների աջակցման կենտրոն,, ՊՈԱԿ-ի
տնօրեն Մ.Անանյանին

Ուղարկում եմ ԳԲԽ 102/16 բողոքով գնումների բողոքարկման խորհրդի բողոքը քննող
հանձնաժողովի որոշումը՝ „Գնումների մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ
կետի գ/ ենթակետով սահմանված կարգով որոշումը հրապարակելու համար:

Առդիր որոշումը „16,, թերթ

Բողոքը քննող հանձնաժողովի

Նախագահ

Վ.Ավետիսյան



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.10.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 102/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ռեզնում» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-102/16 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ Պաշտպանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու), ՀՀ Արդարադատության և ՀՀ Ֆինանսների նախարարությունների բողոքին առնչվող գրությունները, «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ինչպես նաև ԳԲԽ-102/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

«Ռեզնում» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեզնում» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովը 25.08.2016թ. թիվ 1 որոշմամբ հաստատել և հրապարակել է նշված ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը:

Ընկերությունը հայտը, մասնավորապես՝ գնային առաջարկը, ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

Հանձնաժողովը 05.09.2016թ. թիվ 2 արձանագրությամբ հաստատել է, որ ընկերության ներկայացված հայտը /հայտերը/ համարվել են սահմանված կարգով ներկայացված և հետագա գիտատման համար ընդունելի:

Հանձնաժողովը 08.09.2016թ. թիվ 3 արձանագրության 2.2 կետով ամրագրել է, որ մասնակիցների էլեկտրոնային հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ 2.3 կետով որոշել է «Ռեզնում» և «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ների հայտերը չքննարկել և վերջիններիս հայտերը մերժել՝ էլեկտրոնային ստորագրությունների բացակայության պատճառաբանությամբ՝ առանց հղում անելու մերժման հիմքերին:

«Ռեզնում» ՍՊԸ-ն 13.09.2016թ. Գնումների աջակցման կենտրոնի թեժ գծի 010-28-93-27 հեռախոսահամարին ահազանգել է կատարված խախտման մասին:

Չնայած ահազանգի քննարկումը նշանակվել է 19.09.2016թ. ժամը 15:00-ին, սակայն հանձնաժողովը իր 14.09.2016թ. նիստով որոշել է սկսել պայմանագրի կնքման գործընթացը, որի մասին հայտարարություն է տեղադրվել կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը հանձնաժողովի կողմից 25.08.2016թ. հրապարակված հրավերին համապատասխան ներկայացրել է գնային առաջարկը:

Հրավերի 4.1.1 կետի համաձայն՝ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում Մասնակիցների գնային առաջարկների

գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման»:

Սակայն իրենց կողմից ներկայացված տեղեկությունները՝ այդ թվում գնային առաջարկը Հանձնաժողովի կողմից չի քննարկվել և մերժվել է էլեկտրոնային ստորագրության բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ Կառավարության թիվ 168-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին 07.07.2016թ. թիվ 700-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «35-րդ կետի 9-րդ ենթակետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով»:

Նույն որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հուլիսի 20-ի թիվ 605Ա հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի Օրինակելի ձևի Հավելված 5.1.6-ի համաձայն՝ «...Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի սույն հրավերի առաջին մասի 7.9-րդ կետով սահմանված կարգով ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ կառավարության N 168-Ն որոշման 45-րդ կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության N 168-Ն որոշման 46-րդ կետի համաձայն՝ «Եթե սույն կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»:

Վերը նշվածի վերաբերյալ Ընկերությունը 07.09.2016թ. իր թիվ Դ-005 և թիվ Դ-006 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարներին՝ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով, որտեղից ստացվել են պաշտոնական պատասխաններ:

Նկատի ունենալով, որ բողոքի վերաբերյալ բողոքարկման խորհուրդի կայացրած որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ գնումների մասին օրենսդրության միատեսակ կիրառության համար, մասնավորապես, ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված սկզբունքների կիրառման համար, ընկերությունը խնդրել է՝

1. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Ռեգնում» ՍՊԸ-ի և «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի հայտերը չքննարկելու և վերջիններիս հայտերը մերժելու մասին որոշումը և վերջիններիս հայտերը համարել գնահատման համար պիտանի:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ին 1-ին փեղը ճանաչելու մասին որոշումը:

3.Դադարեցնել գնահատող հանձնաժողովի 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ արված հայտարարությունը՝ ընթացակարգի 2,3,4,5-րդ չափաբաժինները չկայացած համարելու վերաբերյալ:

4.Դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից 14.09.2016թ. կայացված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքը քննող հանձնաժողովի 27.09.2016թ. նիստի ընթացքում «Ռեզնում» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդել են բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել են, որ ընկերությունը հայտերը, մասնավորապես գնային առաջարկը ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հրավերով սահմանված կարգով, որի 4.1.1 հստակ նշում է, որ գնային առաջարկը պետք է ներկայացվի ստորագրված և սկանավորված ձևով, իսկ մնացած փաստաթղթերը ենթակա են շտկման:

Ընկերությունը իր 10.10.2016 թվականի գրությամբ հայտնել է նաև որ պատվիրատուն 25.08.16 թվականի հրապարակած հրավերում ըստ էության ներկայացրել է հայտերը ներկայացնելու երկակի պահանջ, այն է՝ հրավերի 1-ին մասի 7.9 կետը՝ մասնակցի կողմից հայտերը էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու պահանջ և հրավերի 2-րդ մասի 4.1.1 կետը՝ Մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկի ներկայացման պահանջ, ինչը թյուրիմացության մեջ է գցել մասնակիցներին: Ինչ վերաբերվում է Բողոքի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության 05.10.2016թ. գրությանը, ապա գտնում է, որ պատվիրատուն հղում անելով հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթկետին, միտումնավոր չի անդրադարձել նույն հրավերի 2-րդ մասի 4-րդ կետին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.10.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ «Ռեզնում» ՍՊԸ-ի հայտով

ներկայացված բոլոր փաստաթղթերում՝ այդ թվում նաև գնային առաջարկում, բացակայում են մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունները: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթակետը, 2-րդ մասի 2-րդ կետի 2.1 ենթակետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 35-րդ կետի 9-րդ ենթակետը (փոփոխություն 7 հուլիսի 2016 թվականի N 700-Ն), որոշել է չքնարկել և մերժել վերջինիս հայտը:

Բողոքը քննող հանձնաժողովի 27.09.2016թ. նիստի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը առարկել է բողոքի դեմ և հայտնել են, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը, քանի որ հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերում բացակայել են մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունները, իսկ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթակետը հստակ սահմանում է, որ մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Բողոքը քննող հանձնաժողովի 11.10.2016թ. նիստի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչը ըստ էության չհայտնելով կոնկրետ դիրքորոշում բողոքը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ, հայտարարել է պատվիրատուի համար տնտեսող և շահավետ գնում կատարելու կարևորության մասին:

3. ԳԲԽ102/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքհորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը խորհրդին է ներկայացրել իր եզրակացությունը և առաջարկել «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից 22.09.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ102/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման

նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռեգնում» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են **էլեկտրոնային թվային ստորագրությամբ:**

3. Ընթացակարգի հրավերին կից ներկայացված ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.1.1 կետի համաձայն՝ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե Մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:»

4. Գնահատող հանձնաժողովի 05.09.2016թ. թիվ 2 արձանագրությունը այն մասին, որ www.armeps.am համակարգով ստացված «Ռեգնում» ՍՊԸ-ի ներկայացված հայտը /հայտերը/ համարվել է սահմանված կարգով ներկայացված և հետմզա գհահատման համար ընդունելի:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 05.09.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը չի քննարկել և այն մերժել է՝ հրավերով պահանջվող էլեկտրոնային ստորագրությունների բացակայության պատճառաբանությամբ:

6. Գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի արդյունքում 14.09.2016թ. որոշում է կայացրել «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին:

7. ՀՀ պաշտպանության նախարարության 05.10.2016թ. գրությունը այն մասին, որ Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԾՁԲ-

4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթակետը, 2-րդ մասի 2-րդ կետի 2.1 ենթակետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 35-րդ կետի 9-րդ ենթակետը (փոփոխություն 7 հուլիսի 2016 թվականի N 700-Ն), որոշել է «Ռեզնում» ՍՊԸ-ի հայտը չքնարկել և այն մերժել:

8. ՀՀ Ֆինանսների նախարարության 14.09.2016 և 16.09.2016 թվականների գրությունները այն մասին, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ գնային առաջարկը ներկայացվում է մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը էլետրոնային գնումների համակարգ ներբեռնելու միջոցով, ապա նշված տարբերակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ դրա ներկայացման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի հրավերին համապատասխանող:

9.ՀՀ Արդարադատության նախարարության 16.09.2016 թվականի գրությունը այն մասին, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլետրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Նժված պարտականությունը չկատարելը հանգեցրել է ոչ միայն ՀՀ կառավարության 10.02.2011թվականի թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի խախտմանը, այլև իրենց պարտականությունը չկատարելը հանգեցրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-8-րդ հոդվածների խախտման:

6.Խորհրդի հիմնավորումները եվ եզրահանգումը

Ընթացակարգի հրավերին կից ներկայացված ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.1.1 կետի համաձայն՝ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **Եթե Մասնակիցը**

տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:»

Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլետրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Ռեզում» ՍՊԸ-ն հայտը և կից փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը ներկայացրել է հրավերի 4.1.1 կետով սահմանված պահանջների պահպանմամբ, այն է՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը էլետրոնային գնումների համակարգ ներբեռնելու միջոցով:

Փաստորոն գնահատող հանձնաժողովը ընթացակարգի հրավերի 4.1.1 կետով և 7.9 կետով մասնակիցներին առաջադրել է փաստաթղթերի ներկայացման երկակի պահանջ և ոչ միասնական կանոններ, որով մասնակիցներին գցել է թյուրիմացության մեջ, դրանով իսկ խախտելով Գնումների մասին Հայաստանի հանրապետության օրենսդրությանը կարգավորող մի շարք իրավական ակտերի պահանջներ, որոնք մասնավորապես հանգում են հետևյալին.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն գնումների գործընթացի սկզբունքներից է հանդիսանում գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում

հայտնում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն որոշման 46-րդ կետը սահմանում է, որ եթե սույն կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չտրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

«Վարչական Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

«Վարչական Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

«Վարչական Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

«Վարչական Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

«Վարչական Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ-րդ հոդվածը սահմանում է.

Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը եւ չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել է (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ եւ անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման եւ (կամ) պահպանման համար:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշման 35-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ-րդ հոդվածը սահմանում է.

Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա:

Իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ սույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Վերը շարադրված իրավական ակտերը վերլուծելով առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության և իրավաբանական անձի համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը կիրառելու սկզբունքի հիման վրա, տառացի մեկնաբանելով ինչպես վերը նշված, այնպես էլ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի սահմանումը այն մասին, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև նկատի ունենալով, որ ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ գնային առաջարկը ներկայացվում է մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը էլեկտրոնային գնումների համակարգ ներբեռնելու միջոցով, խորհուրդը գտնում է որ «Ռեգնում» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը և մյուս փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվեն հրավերին համապատասխանող:

Խորհուրդը նման եզրակացության է հանգում նաև ներոհիշյալ ապացույցների գնահատման և դարանք այլ ապացույցների հետ համադրելու արդյունքում.

Այսպես՝

1.« Գնումների մասին » ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 14-րդ կետի համաձայն, **լիազորված մարմինը՝** պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմինն է:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը՝

իրականացնում է գնումների գործընթացի մեթոդական ղեկավարումը և դրա շրջանակում պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

Օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Ռեգնում» ՍՊԸ-ի գրությունների, 14.09.2016 և 16.09.2016 թվականների գրություններով հայտնել է որ, նկատի ունենալով «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-4/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված է, որ գնային առաջարկը ներկայացվում է մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը էլեկտրոնային գնումների համակարգ ներբեռնելու միջոցով, ապա նշված տարբերակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ դրա ներկայացման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի հրավերին համապատասխանող:

2.«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ-րդ հոդվածը սահմանում է.

օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կամ նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին եւ իրավական այլ ակտերին համապատասխանեցնելու, ինչպես նաեւ այդ ակտերի մշակման ժամանակ սույն օրենքի պահանջների եւ օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանում ապահովելու նպատակով պարտադիր պետական իրավական փորձաքննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

ՀՀ Արդարադատության նախարարությունը, ի պատասխան «Ռեգնում» ՍՊԸ-ի գրության 16.09.2016 թվականի գրությամբ եզրակացություն է տվել այն մասին, որ «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾԶԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Նշված պարտականությունը չկատարելը հանգեցրել է ոչ միայն ՀՀ կառավարության 10.02.2011թվականի թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի խախտմանը, այլև՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-8-րդ հոդվածների խախտման:

3. Ընթացակարգի հրավերին կից ներկայացված ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.1.1 կետի համաձայն՝ «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **Եթե Մասնակիցը փվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է**

վճարի ավելացված արժեքի հարկ, ապա Մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթից արտադրված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթով ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:»

4. Գնահատող հանձնաժողովի 05.09.2016թ. թիվ 2 արձանագրությունը այն մասին, որով հաստատել է, որ www.armeps.am համակարգով ստացված «Ռեգնում» ՍՊԸ-ի ներկայացված հայտը /հայտերը/ համարվել է սահմանված կարգով ներկայացված և հետագա գնահատման համար ընդունելի:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 05.09.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը չի քննարկել և մերժել է այն՝ հայտում հրավերով պահանջվող էլեկտրոնային ստորագրությունների բացակայության պատճառաբանությամբ:

6. ՀՀ պաշտպանության նախարարության 05.10.2016թ. գրությունը այն մասին, որ Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.9 ենթկետը, 2-րդ մասի 2-րդ կետի 2.1 ենթակետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 35-րդ կետի 9-րդ ենթակետը (փոփոխություն 7 հուլիսի 2016 թվականի N 700-Ն), որոշել է «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը չքննարկել և այն մերժել:

7. ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1093-Ն որոշման 4-րդ գլխի 11-րդ կետի համաձայն.

Պետական մարմինները պետք է հետևեն սույն գլխում սահմանված տեխնիկական փոխգործելիության կանոններին և ապահովեն իրենց տեղեկատվական համակարգերի համապատասխանությունը փոխգործելիության մանրամասն տեխնիկական մասնագրերին: Տեխնիկական փոխգործելիության հիմնական կանոններն են՝

ենթակառուցվածքը պետք է հնարավորություն ունենա հսկելու հարցումների հերթականության և բեռնվածության վիճակը և ավտոմատ կարգաբերելու աշխատանքը,

ինչպես նաև ցանկացած չարամիտ ներգործության պարագայում ենթակառուցվածքը պետք է բացահայտի այդ դեպքերը.

Վերը նշված որոշման համատեքստում խորհուրդը անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ www.armeps.am համակարգը չունի հնարավորություն հսկելու հարցումների հերթականության ու բեռնվածության վիճակը և ավտոմատ կարգաբերելու աշխատանքը, որի հետևանքով հայտը ներբեռնող մասնակիցը չի նախագգուշացվում անհրաժեշտ պայման հանդիսացող էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության և դրա պարտադիր լինելու մասին, որի հետևանքով ոչ միայն չի պահպանվում ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի թիվ 1093-Ն որոշման պահանջները, այնպես էլ ձևական պահանջի խախտման հիմքով առավել ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցի հայտը անհիմն կերպով մերժվում է, որով խախտվում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետության կարիքների համար տնտեսող և արդյունավետ գնում կատարելու սկզբունքը:

Վերը նշվածը հիմնավորվում է նաև տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում հնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ հաստատված այն փաստով, որ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգով ներկայացված հայտը համարվել է սահմանված կարգով ներկայացված և հետագա գնահատման համար ընդունելի, սակայն ինչպես նշվել է վերևում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.09.2016թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը չի քննարկել և մերժել է այն՝ հայտում հրավերով պահանջվող էլեկտրոնային ստորագրությունների բացակայության պատճառաբանությամբ:

Պետք է նկատել նաև, որ տվյալ ընթացակարգի շրջանակներում ևս գնահատող հանձնաժողովի կողմից պատշաճ կարգով չի ուսումնասիրվել նաև հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը, անտեսվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ հանձնաժողովը հաշվի չի առել ընկերության հետ կնքվող պայմանագրի արդյունավետությունը և նպատակահարմարությունը, որի արդյունքում պետության կարիքների համար գնումը կլինի տնտեսող և արդյունավետ:

Խորհուրդը բողոքն ուսումնասիրելով պատշաճ մանրամասնությամբ, բողոքում առկա փաստաթղթերը և ապացույցները գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար բավարարության տեսանկյունից գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


«Ռեզնում» ՍՊԸ-ի 22.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Ռեզնում» ՍՊԸ-ի և «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ի հայտերը չքննարկելու և վերջիններիս հայտերը մերժելու մասին որոշումը, 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կամազ Արմենիա» ՍՊԸ-ին առաջին տեղ ճանաչելու մասին որոշումը, 05.09.2016թ. սկսված և 08.09.2016թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ արված հայտարարությունը՝ ընթացակարգի 2, 3, 4, 5 չափաբաժինները չկայացած համարելու վերաբերյալ, 14.09.2016թ. կայացված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Վարդան Ավետիսյան

Անդամ՝



Մանե Նազարյան